



ՄԱՂՁԱՆՔ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՅԱՃԱՐՈՒՄ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՑՆ ԱՇԽԱՐՀԻ

Հուլիսի 25-ին, ուրբաթ օր, հետմիջօրեի ժամը 2.30-ին, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի ներկայությամբ կատարվեց մաղթանք Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով և Մայր Տաճարի զանգերի ղողանջի տակ առաջնորդվեց Մայր Տաճար և նախագահեց համայն աշխարհի խաղաղության համար կատարված այս հանդիսավոր մաղթանքին:

Տաճարում ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, վանքի պաշտոնեականությունը և բաղձաթիվ հավատացյալներ:

«Ուրախ լեր Ս. Եկեղեցի», «Առաւօտ խաղաղութեան» և «Զօրութիւն սուրբ խաչի քրքրիստոս», շարականների երգեցողությունից հետո կարդացվեց Հովհաննու Ավետարանի ԺԴ գլխի 25—31 համարները խաղաղության մասին: Ապա «խաղաղութեամբ քով Հոգիի Ս. Աստուած ճշմարիտ» աղոթքից հետո ծնրադիր երգվեց «Տէր ողորմեա»-ն, ամբողջ աշխարհի խաղաղության սրտաուռ հայցումով:

Աշխարհի խաղաղության ի նպաստ կատարված մաղթանքի վերջում խոսեց Վեհափառ Հայրապետը:

«խաղաղութիւն հեռաւորաց,
խաղաղութիւն մերձաւորաց»:

Սուրբգրական այս երկու գաղափարները ավելի էտե հրամայական պահանջ կհանդիսանան այսօր, մեկը մյուսով պայմանավորված:

Հեռավորաց խաղաղությունը, հեռավորաց կյանքի ապահովությունը և ազատությունը՝ խաղաղությունն է, կյանքի ապահովությունը և ազատությունը՝ նաև մերձավորաց:

Ահա քե ինչու բացատրելի կդառնա այն խոր հուզումի ալիքը, որ կալեկոծե այս պահուս համայն աշխարհը մարդկային, իբրև հետևանք՝ կիրքանքի նման փոփոխ և հեռավոր երկրի մը մեջ պատահած դեպքերու և արտաքին զինվորական միջամտությանց:

Այդ հուզումը մեծ է և արդար, և ամեն մեկ բարոյական մարդ և բոլոր պետական ղեկավարները պետք է միահամուռ կերպով գործեն, ի նպաստ խաղաղության պահպանման և ժողովուրդներու ինքնորոշման իրավունքի: Ինչպես ամեն մեծ ու փոքր ժողովուրդ, նույնպես և արար ազատատենչ ժողովուրդը իրավունք ունի ձեռք բերելու և պահպանելու իր ազգային միությունը, իր ինքնիշխան անկախությունը և իր կյանքի խաղաղությունը:

Այդ իրավունքը պետք է սրբությամբ հարգել և դարձնել ճշմարիտ և գերագույն կանոն մշտազգային հարաբերությանց մեջ:

Միջին Արևելքի դեպքերու կապակցությամբ Մենք մտահոգված ենք նաև իբրև Հայ եկեղեցվո Հովվապետ, որովհետև արաբական երկրներու մեջ կապրին ավելի քան երեք հարյուր հազար հայեր, Մեր հավատացյալ հարազատ զավակները, որոնք անվերապահորեն կանգնած են այսօր արաբական ժողովուրդներու կողքին, անոնց ազգային ազատագրության և միության պայքարի նահապարհին վրա:

Մենք կողջունենք մեր մեծ Հայրենիքի՝ Սովետական Միության խաղաղասիրական բարի առաջարկությունները՝ Միջին Արևելքի տազնապին վերջ տալու կապակցությամբ և կաղորենք առ Աստված, որպեսզի Միավորված Ազգերու Կազմակերպության բարձր իշխանությունը, առաջնորդված ավետարանա-

կան խաղաղության օգիով, իրավունքի և արդարության սկզբունքներով, իր բարոյական ու քաղաքական հեղինակությամբ դադրեցնեն ռազմական օտար միջամտությունները Միջին Արևելքի մեջ և արաբական ժողովուրդները վերագտնեն իրենց ազգային կյանքի ազատությունը և խաղաղությունը:

Խաղաղություն և միասնություն և շինարար վերելք արաբական ազնիվ ու շարժառնող ժողովուրդներուն:

«Խաղաղութի՛ն ամենեցուն»:

«Փա՛ռք քեզ, Տէր, Աստուած մեր» մաղթանքից հետո Տերունական աղոթքով վերջացավ Մայր Տաճարում «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» կատարված մաղթանքը:

